# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

№ 16/62979-24 «11» ապրիլի 2024թ.

**«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ**
**Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ**
**/Ք. ԵՐԵՎԱՆ, Պ. ՍԵՎԱԿԻ 1/**

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**
**(Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին)**

Հարգելի՛ Գ. Հակոբյան,

Երևանի քաղաքապետարանի և «Հազարաշեն» ՍՊ ընկերության միջև 2023 թվականի հունիսի 9-ին կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/67 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի մանկապատանեկան մարզադպրոցին կից լողավազանի շենքի քանդման, նորի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի 1.2 կետով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները:

Մասնավորապես.

Երևանի քաղաքապետարանի և «Հազարաշեն» ՍՊ ընկերության միջև 2023 թվականի հունիսի 9-ին կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/67 ծածկագրով աշխատանքների կատարման ժամկետը 2024 թվականի հունվարի 5-ին ավարտվել է, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը 25.03.2024 թվականին «Հազարաշեն» ՍՊԸ-ին է հասցեագրել թիվ 16/48371-24 գրությունը՝

Պատվիրատուին նախագծանախահաշվային աշխատանքների ողջ փաթեթը մինչև 2024 թվականի մարտի 27-ը ներկայացնելու վերաբերյալ:

Միաժամանակ նշված գրությամբ վերջինս իրազեկվել է պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի դրույթի մասին, այնինչ ներկայացված գրությանը որևէ պատասխան չի տրվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

**Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:**

**Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝**

**բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հազարաշեն» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ **Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ** լուծում է պայմանագիրը՝ *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերերդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի որակավորման և կատարման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 450.000 ՀՀ դրամ և 300.000 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ**
**ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ**

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ
3910890377

2024-04-11 17:59:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Շինարարության և բարեկարգման վարչություն
հեռ. 011-514-256